Աննա Արզումանյան

ԻՄ ԱՆՈՒՆԸ ՀԻՄԱ Է

Երևան, 2013

Իսպաներենից թարգմանությունը՝ Ալիս Տեր–Ղևոնդյանի ©

Խմբագիր ՝ Սաթենիկ Ավետիսյան ©

Կազմի լուսանկարը՝ Սևան Ղարիբյանի, Բուենոս Այրես, 2009©

Նյու Յորքում հասմիկներ չկան:

Մի վարսավիր կա, մի հոգեբան

և կոշիկի խանութ

քառասունիններորդի վրա:

Կա երկնքի մերկ փորը,

Նրա խալերը՝ դրոշակակիր::

Կան շենքեր՝ նավերով ու առագաստներով:

Լոգասենյակից թատրոններն եմ տեսնում

և ճոճվող

նավերն ու առագաստները

և ցուցափեղկերը

և պատուհանիկները

և պտտվող դռները,

որ ծփում են ջրի երեսին,

շարժվում են:

***

Ապակիներ կան, որ լույս են ճառագում

գոթական եկեղեցիների պես:

Այդ ճոճքը տեսնում եմ իմ լոգարանի միջից,

Տեսնում եմ թանգարանների, սրճարանների թևաբախումը:

Ողջ Նյու Յորքը շարժման մեջ է ինձ հանգստացնելու համար:

Դա քնքշանքի արտահայտություն չէ.

Դրանք տոպազից և բրոնզից կենդանիներ են,

որ դեռ օդում արդեն թուլացնում են իրենց մկանները:

Նրանց լեզուները խելահեղ, ցանկացած հապաղում անհետացնելով,

առաջ են անցնում:

****

Նյու Յորքում հասմիկներ չկան:

Հրացանի նշանակետով ինձ չափեց:

Դրա մասին էի մտածում, երբ որոշեցի չվերադառնալ:

Մտածեցի՝ այդպես կասեի:

Կասեի, որ հրացանով նշան բռնեց ու ինձ չափեց:

Կասեի, որ ներսից հրացանն այդքան էլ սառը չէր,

որ այն ոտքերից մեկին հենեց ու հրեց,

Կասեի, որ լաց եղա:

Եվ շենքերը՝ նավերով ու առագաստներով,

ճոճվում են:

Հրացանը ճկվող նյութից է,

չի կրակում:

Նա հրացանի նշանակետով ինձ չափեց,

մինչ ես խմում էի առագաստները իր նավերի:

Ցո՛ւյց տուր ինձ այն, ինչ ամենաշատն է ինձ վախեցնում,-

խնդրում է նա:

Նրան ցույց տալու համար այն,ինչ ամենաշատն է վախեցնում,

անհետանում է այն ամենը, ինչ դանդաղում է

ներսումս,

չվերադառնալը՝

հագեցնող մի բան,

հրացանի նշանակետում մեռնելու պես մի բան:

****

Սա ապրելու քաղաք չէ,-

պատմում է ինձ հրեական թաղամասի

թասակների խանութի վաճառողուհին:-

Այս քաղաքը անէանալու համար է:

Կարմրավուն քար,

վարդագույն գրանիտ,

նեղ ու երկարավուն կղզի,

շուրջբոլորը գետեր,

սփռոցները՝ վանդակավոր,

կարմիր ու սպիտակ,

բուդդայական տաճարները

և սինագոգները

և եկեղեցիները

շարժվում են:

Շարժումն ավելի ու ավելի է արագանում.

այն հիմա արդեն

տենդագին է:

Ես գովազդային լուսապաստառներն եմ:

Լուսապաստառները

վաղ առավոտյան

Էկրաններին

ինձ են ցուցադրում քեզ

կիսամերկ:

Դու խնդրում ես՝

շրջվեմ մյուս կողմ:

Ես՝ պաստառներին,

նրբանցքներում,

բանվորական թաղամասերում

շուռ եմ գալիս,

հագուստս վեր եմ հանում:

Լույսերով ողողված մեծ ճանապարհը,

ջազ-սեշընները

բառկասների վրա,

արհեստական լողափերին,

դատարկ լողավազաններում:

Ուղղահայաց թավ մի գիծ,

ինչպես պատահում է, երբ տեսախցիկը

փախչում-հեռանում է իր հերոսից՝

իր իսկ շարժմանը տրվելով:

Նյու Յորքում չկան հասմիկներ:

Ճերմակը ճերմակի վրա հնարավոր չէ նկարահանել.

վազորդների, երաժիշտների, չմշկորդների

մի հավաքածու

կենտրոնական զբոսայգում

պարտադրում է

մի բազմագույն աչքի նման,

թափ է տալիս,

պոկում-տանում է հազարամյակներ:

Քաղաքակրթությունների մի տրոփյուն՝

անսահմանորեն

ձգված:

Ես անկողնում եմ, որը շարժվում է

պաստառներին՝

էկրանի ներսում

շուռ եկած դիրքով

ցույց տալով քեզ:

Պատկերը փոխում է ուժգնությունը:

Թատրոնի կամ կրկեսի ատրակցիոնները,

Մոնղոլիայի տափաստանները,

թեյի սեղանիկ Սանկտ-Պետերբուրգում,

մուժիկը, հնդկուհին:

Մի հայացք, որ ոտքերիս վրա

սևեռված չէ,

ջրի մեջ է աղմուկը՝

երաշտության ձայների,

նավերի, առագաստների,

ինչպես մի լուսանկար՝ արված

անմիջականորեն

իրերի ներսից:

Ատամնաձև մի գիծ

Պսպղուն է դարձնում պատկերը.

Դարձնել շարժումն ավելի ուժգին,

ընկնել:

Հիմա, երբ շրջվում եմ,

պտտում եմ վիզս,

լրտեսում եմ Էկրանը,

քեզ եմ տեսնում, երբ դիպչում ես

գլխիկիդ

կաթնաբույր:

Մի խեղդվածի ես փնտրում սև ջրերում,

տեսնում ես՝ ինչպես են երանգները մարում,

ինչպես եմ սուզվում դեպի անհուն խորությունը՝

ջրապտույտի վերածվելով:

Կարմրավուն շիկացած արտացոլքը:

Ֆիլմի մեջ ես,-

ասում էին ինձ,

և ես մտածում էի՝

դեռ կարո՞ղ եմ, արդյոք, խոսել իմ մասին:

Կինոն աշխարհը դարձնում է

մի պատմվածք.

Ես՝

պաստառների մի հավաքածու,

պատկերների,

որ տարածվում են, բազմանում են

առանց կորստի

ու դիմադրության,

ճողփում են,

ճոճվում են

ջրում:

***

Ծխախոտի խանութում

հաճախորդները ծխում են

հաստափոր սիգարներ:

Մի մայթաչափ հոսք անցորդների,

որ սուրճ են խմում

թղթե բաժակներից,

որ նման են այն պլաստիկ նյութին,

որով ծածկում են մեռյալներին:

Դու ֆիլմի մեջ ես:

Այդ ֆիլմում,

հունգարական մի ռեստորանում,

Պալյա Բեան է երգում:

Քաղաքը մեջս իրար է գալիս,

ինձ ցնցում է, և ես նրան տեղն եմ գամում:

Դեռ կարո՞ղ եմ, արդյոք, խոսել իմ մասին,

Ցնցում եմ ուսերս,

վեր եմ կենում հունգարական

պարելու,

բրետելներս իջեցնում եմ,

ձեռքերս դնում

ուսերիս վրա:

Ինչ-որ մեկը ափսեները գետնով է տալիս,

կոշիկները հանում,

դեպի ոտքերս է խոնարհվում,

արյունում է:

Մատներով շոյում եմ

նրա շուրթերը:

Մենք ընկնում ենք:

****

Նյու Յորքում չկան հասմիկներ:

Օխրայագույն պատեր՝

կապույտ ու կանաչ բծերով,

անանուն բլոկներ՝ որպես տներ,

որ խորանում են

հայացքիդ մեջ:

Քո աչքերից

ինձ մնում է բույրը,

որից կուրանում են

հինգերորդ պողոտայի[1]

կառքերի ձիերը:

Ձիերն էլ մերկ ձիավարներ են,

Որ հիշում են

մի կույր երազ հեծնելը:

Բերանիս մեջ մնում է

թանաքի համը:

Մնում է Մարիամ Աստվածածինը

որին փոխարինել է գեներատորը՝

ծիսական մի հավատք՝

բենզակայաններում,

ցուցապաստառների վրա,

թանգարանների ներսում,

որտեղ նկարներ են կախում,

որտեղ արևմուտքի միջին նահանգների խորքերի

եղջերուների երամակները

լուսաբացն են տեսնում:

***

Փողոցներով քայլողների աչքերում

[1] □□□□□□□□□□ □□□□□□□□ “□□□□ □□□□□□□□” - □□□□ □□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□□□□ □□□□□□:

երամակները քշում են դեպի

ամենամոտ

կայարանը;

Կարելի է կռահել, թե ինչպես է

հոտը կտրում անցնում չլուսավորված բարձունքը՝

իրեն բզկտելով

այդ անկառավարելի հրմշտոցի մեջ:

Մի խենթության շրջապտույտ.

բեմը, որտեղ դերասանը

հույզեր չունի, սոսկ դերակատար է :

Ցուցափեղկեր, անձեռոցիկներ, բաժակներ, սրճամաններ:

Ժողովրդական ֆանտազիաների

հին տերեր:

Ես նույնպես այստեղ եմ, երևակայության պտուղ.

մի կին՝ դիտված առջևից երևացող ցայլքով, անկողին է մտնում

մի ներքին տարածքում՝

դեպի ներս ու

դուրս

ծփացող վարագույրներով:

Երևում է սեռը,

բայց ոչ գլուխը,

ոչ էլ աջ ձեռքն

ու ոտքերը:

Մի կույս Մարիամ՝

կիրակնօրյա օրհներգերում

փառաբանված,

տոնավաճառի մի կիրակի՝

Բուենոս Այրեսի իմ թաղի

տոնավաճառների նման:

Եվ սեղանիկներին՝

հնդիկների, պակիստանցիների, մեքսիկացիների

Սուրբ Մարիամը՝

մի գեներատոր, մի էլեկտրականություն

իրերի ներսում:

***

Նյու Յորքում չկան հասմիկներ:

Հոփըրի[2] կտավի

առջևից պատկերված կինը

մի տան մեջ, որ խորանում է

իմ հայացքի մեջ,

կարծես մի նավ լինի, որ շարժվում

և ճամփորդում է առանց լուսավորության,

առանց լուսարձակների:

Թափանցիկ պատերով մի նավ,

մի կղզում՝ փարոս:

Նավը՝

[2] □□□□□□ □□□□□ (1882 –1967) □□□□□□□□□□ □□□□□□ □□□□□□:

մի փարոս, հոլանդացիների

ստեղծած տարածքում,

մեղմ ու ալիքանև կիսադեմի եզրագծերով:

Ժայռոտ մի տեսարան՝

արհեստական լճերով

և տնկած ծառերով:

Նոր Ամստերդամը,

մի նավ,

որ շարժվում է

մտացածին մի տարածքում,

փայլփլող ավազի մի եզրաշերտում:

Հավատքի ծեսը՝ մի թատրոն,

որտեղ նորից երեխա եմ ունենում:

Մերկացնում եմ կուրծքս,

քեզ կուրծք եմ տալիս:

Բերանդ՝

փիրուզյա մի անձրևի տակ, որ

ցողում է դեմքդ:

Ինձ դուր է գալիս, երբ

Կերակրում ես ինձ:

Քո աչքերում

Մի բույր կա ռեհանով լեցուն մարգի:

Ծնկի եմ գալիս, դիպչում եմ

Քրիստոսի պատկերին:

Ես սիրում եմ քեզ կերակրել,-

նրան ասում է Սուրբ կույսը,

մինչ նայում է նրա

ռեհանով լեցուն մարգի գույնով

աչքերին:

Մինչ շոյում ես մազերս ողջ երկարությամբ,

բերանս ես դնում

կերակուրը:

Քրիստոսի պատկերը

ֆիլմում

սկսում է այրվել՝

տարածելով բռնկվող նարնջագույն պղպջակներ:

Հաղորդություն ստացողները

վերածվում են հալչող, մեկը մյուսի մեջ սահող ֆիգուրների:

Մեզանից կազմված արշալույսը փայլում ու ցած է նետվում:

Դիմագծերը փախչում են

Քրիստոսի դեմքի ուրվապատկերից՝

ջրի մեջ դատարկություններ երևակելով:

Ինձ պետք ես հասմիկներից զուրկ

Նյու Յորքի պես:

Խոշոր պլանների

մի հերթագայություն,

որը պտտվում է մշտապես եռացող մոլորակների նման,

պտտվում է և շարունակ

խոտորվում:

Սեր, որ սահմանվում է

վերսկսվելու ու վերածնվելու

իր զորությամբ:

Ինձ դուր է գալիս

կերակուրը

բերանդ դնելը.

Քրիստոսը, Սուրբ կույսը, հաղորդություն ստացողները

և ես՝ ծնկաչոք,

հասմիկներից զուրկ Նյու Յորքում.

այդ ամենը առկախում է շարժումը:

Մոլորակների պես պտտվող մարմինների խավարումը

իր լուսային արկածներում

տիրանում է

սպիտակին:

Հրադադար չկա

Այս ուժասպառության մեջ:

Սովի ու հափրանքի ծվեններ,

ահագնացող

բռնություն:

Կիսափակ աչքերով,

գլուխը հետ գցած,

այդքան հագենալուց

բերանը կիսաբաց:

Հրեշտակային մի ձեռք

կուրծքս է մերկացնում քեզ համար:

Պետք է նայես նրան,

ես եմ այս Նյու Յորքը առանց հասմիկների:

Ինչ-որ մեկը այստեղ

մի կնոջ է կանգնեցրել՝ ջահը ձեռքին:

Ջահով կինը

խոռոչավոր ջրի մեջ է:

Խոռոչը

և ջուրը

շարժման մեջ են,

ինչպես կինը, որ տեղաշարժվում է

իր հերթին շարժվող քաղաքով մեկ:

Քաղաքի ջուրը

մի ռուբինագույն ստինք ունի,

ժամն է հուշում

Ատլանտյանի

երևայակայական նավաստիներին:

Քաղաքը

ցամաք թաղամասերի

մի կղզեխումբ է:

Մի բացիկ՝

դեպի վեր սլացող մանուշակագույն փայլով աշտարակների,

որ

ճխլում է խոտը.

ոչինչ չկա ջրում,

վայրենի սլացք՝ դեպի երկինք՝

նորից ու նորից:

Ջուրը գոլորշիանում է

ոսկերչանոցներում,

համեմունքների, գորգերի խանութներում:

Պարսկաստանում չենք,

փյունիկեցի էլ չենք,

եկել ենք տեսնելու:

Ամբողջ շինությունը

մի հուշարձան է՝

հավերժական, կայուն, անհողդողդ,

իմ աչքերի խենթության մեջ:

Ստինքները քո ոտքերի բարձրության վրա՝

հպվում են նրանց:

Հասմիկներից զուրկ Նյու Յորքի ջրի խոռոչում ամորձիներդ տեղավորում եմ կրծքերիս արանքում.

բարձրանում եմ այնքան, որ

ջուրը գոլորշիանա:

Այտուցված վարդագույն երակներ կան ջրում,

մի խոնավ մատանի:

Դու՝ ջահով հուշարձան,

բացում ես ոտքերդ ջրում,

մինչ համբուրում եմ բացիկը

աշտարակների,

որ ցորենից, դարչինից ու նուշից են

շինված:

Բացում ես ոտքերդ:

Ձեռքերով գրկում եմ բարձը,

որ ճիչերով չլցնեմ

քնքուշ ցայլքը ծածկող կույր համբույրների

հորձանքը:

Այնքան, մինչև որ ջուրը

ծածկում է բոլոր հետքերը:

Այդժամ հրեշտակները

դրսում են մնում,

այդժամ տղաները

ձեռքն են վեր հանում,

այդժամ լեզուս

կրակ ու ծծումբ

է անձրևում:

Հիմա

թողնում եմ բոլոր «այդժամերը», բոլորը՝

բացի քո սերմից:

Բացի քո սերմից:

Ստալագմիտների խուրձեր:

Հղկել ծավալը:

Որ լույսը թափանցի,

երբ խիտ մառախուղը

սկսի նոսրանալ:

Սարերի գագաթներ,

գրեթե գիշերային տեսարաններ:

Գայլի երախ,

մի անհատակ արգանդի խառնակություն:

Նյու Յորքը՝ մի Վենետիկ՝

կղզուց կղզի թրևող իր հետիոտներով մի Վենետիկ:

Լճակների մի քաղաք՝

փողոցների փոխարեն ջրանցքներով,

բայց ջրանցքներով ջուր չի հոսում,

այլ մարդահոսք է, որն ավելացնում է

խցանումը՝

առաջացնելով բռունցքներ

ճկուն փայտից՝

Ֆիլիպինների, Հնդկաստանի, Հոնդուրասի ծառերից:

Ավստրալիայի «մետաքսյա» կաղնին;

Թխկին և Էբենոսի ծառը:

Արծաթազօծ մետաղի մի հյուսվածք,

Մի խառնուրդ, որի փայլն անսպառ է:

Մանհեթընի վենետիկյան միայնության մեջ

չկան հասմիկներ:

Խոռոչներում մի անտառ կա ասեղների,

որոնք դիպչելիս նվազում են:

Անցորդը հպվում է, հետո կաթնանման եզրագծի հոտն է առնում :

Չեմ գրի թլիփ բառը:

Թլփատված առնանդամը

պոեմի վրա:

Հղկել ծավալը,

քո մարմնի լուսաթափանց մասը,

երբ խիտ մառախուղը

սկսում է ցրվել,

ինչպես չամիչներով մի աղի հաց

Լիթլ Իտալիի բրազիլական ռեստորաններից մեկում:

Բաներ եմ արել, որոնց մասին մինչ այժմ լսած չկաս:

Շարժուն հանգույցով մի պարան,

քո Ռեբեկան ուղտերին ստիպում է ծնկի գալ

քաղաքից դուրս՝

մի ջրափոսի կողքին,

հետմիջօրեին՝

այն ժամին, երբ օրիորդները

գնում են ջրի:

Ոտքերդ եմ լվանում:

Խմում ես իմ սրտի վրայի բոլոր ստալագմիտները,

Գաուդիի վերասլաց աստղերի անձրևը, հետմիջօրեի Մանհեթընի մոլագար վազքը

ջրի կողքին:

Ինձ ես պարզում ոտքերդ,

մինչ ես ոտքերդ եմ լվանում

քո ձեռքերով միացնում ես կրծքերս,

լիզում մի պտուկս և մյուսը,

մինչ լվանում եմ քեզ,

մոտենում ես մի աղջնակի,

որ անտեղյակ է և ուզում է

հրեական մի դեմք

արաբական բարձի վրա:

Դիրիժաբլը տեղում պահող

հենասյունը

հասմիկներ է կտրում

իմ թևատակերից:

Ես դրանք ջրում եմ

ոտնլվայի ջրերով,

այնտեղ, ուր ծնկի էին իջել

ուղտերը:

Օրը հինգ անգամ վկայել՝

մաքուր ավազով մաքրվելով

մի լաթ կտորի վրա,

սավանի վրա

խոնարհումների մի շարան,

Ծնրադրման մի վայր:

Տարին երեք հարյուր վաթսունհինգ օր

մի տարածքի մեջ

մի լաթով կամ գորգով՝

աղոթքի համար նախատեսված:

Աղոթում ես կողքի պառկած՝

կլանելով այն գիծը, որ վար է իջնում մեջքից

դանդաղ,

ապա քիչ-քիչ արագանալով:

Մեր մատներն ագուցվում են

երեքհարյուրօրյա մի գիշերում:

Փակ կոպերի ետևում չքնեցի:

Ծնկի՛ արի,- ասում էիր ինձ:

Հատակին՝ այդպես հասկացա:

Օրը հինգ անգամ

Քո ասած աղոթքը

մի լաթի վրա,

սավանի վրա

ինձ ասում է՝

ոչ թե հատակին,

անկողնում:

Անքուն մի գիշեր:

Շաբաթական յոթ անգամ

համբուրվելով փողոցներում:

Երեք հարյուր վաթսունհինգ օր

նախաճաշելով

դարչինով ու մեխակով համեմված ծիրան:

Կողքի էի պառկում

պատուհանները կլանող

սև աղյուսների

հեկտարների նման:

Գլխիվայր ընկնող ասեղների քաղաք

Նյու Յորք՝մի եկեղեցի

հյուրանոցների,

ավազանների,

շոկոլադի խանութների:

Մի կղզի, որ երկարում է

իր շոշափուկները,

մի խավար արգանդ

գայլի երախի պես,

շինություններ՝ մինչև ձեղնահարկերի

լուսամուտները,

ձուլվում են երկնքին:

Մի կրակ, որ բոցկլտում է

սառցալեռի խորքում:

***

Այստեղ չեն աճում հասմիկներ:

Հանգած հրաբխի խառնարանի վրա

Սարը դառնում է ճարտարապետություն:

Լեռների աշխարհները

մշտական մի մոլագարության մեջ

կլանում են պատերը

ակնահյուս մոգական

գորգի վրա:

Մի հյուսվածք՝

հյուսվածքի ներսում,

մի գորգի

գործվածքը,

սավանը,

որի վրա աղոթում ենք

օրը հինգ անգամ

աշխարհին հավատալու համար,

աշխարհագրագետներից կորսված կլիման զգալու համար:

Այլևս չլինենք վարձկան.

բառերը վերադարձնենք

ցայլքի հովանու ներքո:

Հայացքով պահել

այն, ինչ տեսնում ենք,

և ոչ թե այս բացիկների շարանը,

կարմիր թավշյա աթոռների

օվկիանոսը,

հուշարձանների, թատրոնների, նոտակալների

հանրագումարի մեջ:

Օվկիանոսում կա մի նավ՝

ապակիների արանքում բանտված,

երգող ուղևորներով,

նավաբեկյալներով, որ ծովին են վերադարձնում

այն, ինչ նրան է պատկանում:

Քո ոտքերը՝

Նավ են գլխիվայր, որ սկիզբ են առնում

ջրի տակից:

Ինձ ասում էիր՝ ծնկի՛ իջիր,

Իսկ ես՝մելամաղձոտ մի կենդանի,

հասկանում էի՝ գետնին:

Կտուրների սև ապակու միջով,

որտեղից նավն է անցնում,

որտեղ բանտված է, բայց շարժվում է,

հնարավոր է կռահել

բուսական մի անցյալ,

երկրաչափական պարտեզներ

լույս ճառագող մի քաղաքի՝

լույսի, օդի, սիզամարգի

իր շարժումով:

Ապակու միջով

երևում է փախչող մի նավ,

և արդեն չի հասկացվում, որտեղով է անցնում:

Հիմա արդեն մեր իսկ դեմքերն են

շարժվում ապակու վրա:

Նոր Բաբելոնի հնարովի

մարգագետիններ.

մի նվիրվածություն,

մի կասկադ, որ տանում է դեպի քանդակների պարտեզը:

Հազիվ միահյուսված մի կիսագունդ,

ինչպես իմ ու քո մատները

քնած ժամանակ:

Մինչ կոպերի ետևում

ես արթուն եմ,

վեր եմ հանում գորգը, սավանը

օրը հինգ անգամ,

տեսնում եմ քեզ դեռ քնած

շարժվելիս,

քո բաբախող անդամը

լեզվիս վրա, որին հպվում է

մաքուր ավազը. այն աղոթում է քեզ

մի հյուրանոցի անկողնում:

Նավաշինարանի նման մի հյուրանոց՝

ծանծաղուտի մեջ խրված,

ջրի երեսին լողացող մի հանգրվան,

ջրհեղեղին սպասող

մի լաստագերան:

Հետմիջօրեի չհագեցող քաղաքային համբույրներ.

այսպես են հորինվում հիշողությունները.

սրբի ոտքը համբուրելիս

ոտքն անհետանում է:

Փաստերը վատնելու ձևերը:

Ատլանտյան մի երազ,

հակառակ կողմից մի Եգիպտոս,

կլոր մի բուրգ,

այս ջրհեղեղը;

երկաթբետոնե մի բարկաս,

հյուրանոցը

և շենքերը, որ ծփում են

այն Մանհեթընում,

որ կորվել է.

մի կղզի, որ ուռցնում է ողնաշարը:

Կայմերի գծաշարքի վրա

ծածանվում են դրոշները,

կոր շարանների մի հավաքածու, որ գլխապտույտ է առաջացնում:

Լա Գուարդիա օդանավակայանը

իր տպավորիչ կորությամբ

երկնակախ,

որն ուժ է ստանում

ապակիների կուտակումների ետևում

թաքցնելով

օդանավերի շարժումը:

Ալեկոծված մշուշի մի շղարշ,

քո տաբատը:

Իջեցնել քո շղթան,

միայն շղթան:

Կտորի ծալքը

քո պինդ անդամով

ուղղվում է դեպի ներքև:

Ձեռքս բոլոր կողմերից հպվում է

նրան, ինչին դիպչում է՝

ուրվագծելով նրա ձևը:

Սա մի հո°ւշ է արդյոք,

մի ցանկությու՞ն,

մի հավա՞տք:

Պողպատե զրահի վրա քեզ խժռելու

իմ արնախում ցանկության

համառությունը,

դատարկ կաղապարներ,

ուր լցվում է

դյուրակուռ մի հեղուկ:

Ծալ-ծալ ընկնող տաբատիդ ուրվագծի և ուղղանկյան

արանքում

կորացող արաբեսկները

անվերջ շարժման մեջ են:

Յուրաքանչյուր ձեռք փնտրում է

իր սեփական հողակտորը,

հղկված և ծանրաքաշ քարը:

Մոտենում եմ,

բոբիկ քայլում եմ միջանցքներով,

որոնք վերածվում են երկկենցաղների,

լքում են հողը

և դառնում են

մի փայտե կամրջակ գետի վրա:

Մոտենում եմ:

Հեղուկ դարձած աղվամազի

մի խառնուրդ

մի թափանցիկ կաթի մեջ,

մի սպիտակ ջրհեղեղ

ինձ շպրտում է շենքերի արանքի

անդունդները:

Միջնադարում ենք:

Մեզ դարձնում ենք անճանաչելի

ոչ թե մի այլ հագուստով ծպտվելով,

այլ լինելով այսպես՝ առանց հանդերձի:

Բոլոր պատմությունները

թվում են համաժամանակյա:

Չենք կարող դիմել

այդ ոստիկանական տակտիկային՝

խոչընդոտել կասկածյալի

տեղաշարժը:

Սա Եգիպտոսն է, որ տեղաշարժվում է

այս՝ առանց հասմիկների Նյու Յորքի մեջ:

***

Մտնում եմ Ռեջիո սրճարանը:

Մի տղամարդ,

նստած իմ կողքի սեղանին,

շաքարավազի մի ծրարիկ

խնդրելով,

ինձ ասում է՝I’m turkish and you?[3]

Բավարար չէ

այրել բոլոր արխիվները:

Փաստերը խունանում են,

քիմերները մոգոնում են իրենց հիշատակները:

«Թուրք» գրվում է մեծատառո՞վ, թե՞ փոքրատառով.

Անցյալը թաքնվում է

հայացքի ետևում

փոխանակ առաջ

[3] □□ □□□□□ □□, □□□□ □□□: □□□□□□□□□□ □□□ □□□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□ □ □□□ □□□□□□□□ □□□□□□□□□□□:

մղվելու:

Ընդհատ բռնկումներով

քո աղվամազն եմ տեսնում

իմ աչքերի խորքում:

Մի թաց աղվամազ՝

կանաչ խոնավության մեջ:

«Դու» գրվում է մեծատա՞ռ, թե՞

փոքրատառ:

Իտալական մի սրճարան

Գրինվիչ Վիլիջում,

Մեդիչիների

բոհեմական կյանքը,

Կարավաջոյի կտավները

պատերին:

Եղունգներս

կտրել էի,

որ քեզ չվնասեմ,

երբ քնքշանքս բարձրանա

քո ազդրերն ի վեր:

Քո արբած մարմինը՝

դիմադրելիս,

նրա մինչ այդն ու հետոն,

ինչին ունակ է

քո մարմինը՝

դուրս պրծնելով

ծովածին հրեղեն բանակներից:

Ճեղքը լայնանում է.

մենք ծանոթացանք

մի արարողության մեջ,

մի դիմակահանդեսում,

որտեղ անհետանում է

ֆիզիկական մարմինը՝

պատմության մի բեկոր,

որ քարշ է տալիս իր հետ:

Տեսանկարել բառը՝

մի սև լեզու,

որը ստեղծում է

մի նոր մարմին:

Այն, ինչ եկավ

խոսակցությունից հետո:

Այնտեղ, ուր ավարտվում է քնքշանքը,

իմ պարանոցն է սկսվում,

մատներիդ սեղմումը,

որ խեղդում է ինձ:

Ժամանակի խնդիր է,

ևս մեկ ժամ:

Եվս մեկ ժամ

սարերի տեղ քարեր

տեսնելու համար:

****

Հիմա ես եմ,

որ տակից եմ գալիս:

Մի ցածր մակընթացություն

իր հետ բերում է

գալակտիկաների մի բույլ,

կետեր, հարթություններ, մի ծավալ,

որտեղ աշխարհն է հոգնում՝

ինձ արյունլվա անելով:

Խաչակնքում եմ

այնպես, կարծես եկեղեցի լինես՝

Քո հայացքի մեջ ինձ տրորելով

այն գույների վրա, որ տեսնում ես

շերտը շերտի ետևից

մինչև որևէ անցյալի հանդիպելը:

Հիշողությունը

լոկ հիշատակները չեն,

դա մի թաղանթ է,

թլփատված

անդամի վարդագույն գլխիկն է.

մի թաղանթ,

որում կարելի է խեղդել մեռածներին:

I’m turkish and you,-

առանց հասմիկների Նյու Յորքում:

Ահագնացող արագությամբ

փոխատեղվում են արվարձանները,

գետտոները,

համակենտրոնացման ճամբարները

ձգվում են,

գահավիժում են:

Այստեղ երբեք բնակավայր չի եղել:

Մի շիլաչ կենդանի

որքան ավելի է մոտենում

իր ավարին,

այնքան ավելի է շեղացնում աչքերը:

Փոխանակումը

ժողովուրդերի անվերջության և իմ միջև,

որ կոտրված եմ՝

արվարձաններում,

գետտոներում,

համակենտրոնացման ճամբարներում:

Ես՝ շիլաչ,

աչքերս շեղացնում եմ

դեպի քո վարդագույն գլխիկը,

քո կոնքը:

Ստեղծում եմ մի ազգ՝

Հենց այստեղ։

Ծովածին հրեղեն բանակի պես քո մատները

ինձ թրջում են ալիքներում,

ջրիմուռային քո մատներից՝

մի պաղ ջուր

մեջս բացվող մի բանի վրա։

Հուսահատ մի կենդանի

սեղմում է ծայրը։

Իմ անցյալ էության

պատկերները

մեկը մյուսի վրա են գալիս

պատրանքի պես։

Հաստ երակդ

լեզվիս տակ՝

վերջին կաթիլն եմ

թորում,

երբ սեղմում եմ։

Եվ ջրիմուռից քո մատները

զովացնում են իմ ծովերի

ջրերը։

Եվ հարցը

մարմինների այդ տոնահանդեսում.

I’m turkish and you?

փնտրելով մի դեմք

իմ շիլ աչքերում շեղված,

որտեղ խեղդվում են

մեռյալներ:

Դե եկե՛ք փոխենք իրերը

գործողությունների

թատրոնում,

այնտեղ, որտեղ նրանք ասում էին՝

սխալ ենք արել՝

ողջ մարդ թողնելով,

որտեղ ասում են, որ

գնդակահարվողների

աչքերը չէին կապում.

լուռ խավերը՝ ապշանքի մեջ,

իսկ բառաշարերի

մի պոռթկում

քարտեզ է ձևավորում՝

հատելով ռազմաբեմը:

Քեզ կրկնակիորեն կրկնակի

ունենալու ապշանքը՝

իմ մարմնի մեջ կրկնակիորեն կրկնակի

ստիպում է, որ անհետանան

այդ ձայները:

«Ռազմադաշտից դուրս»

հասկացողություն

գոյություն չունի,

քանզի որևէ տեղ

հետք չի մնացել:

Սա է այդ անվերջանալին,

կրկնակիորեն կրկնակին,

առանց հետքերի:

Նորից լսում եմ

I’m turkish and you?

և դա բնավ

էլ ուրիշի ձայն չէ:

Քանի որ

Անընդմեջ,

քանի որ

անդադար,

ծնկաչոք

բռնում եմ քո ամորձիներից:

Սպանել պատկերը:

Աղետը

պոեմի

անհաջող հանգուցալուծումն է:

Գրենք նորից,

փոփոխենք վերջաբանը:

Շոյում էիր

մեջքս ի վար սուզվող գիծը՝

այդ ակոսը,

առանց հասմիկների Նյու Յորքում:

Շրջված մի նավ,

ամայի կղզի՝

ջրի մեջ հոգեվարք ապրող իր ձկներով,

փարոսները, որ խելակորույս

ճեղքում են

խավարն իրենց ճառագայթներով:

***

Ձեռքդ

մեջքիս

իջվածքում

արևի համ ունի:

Գիտեմ, քանի որ զգում եմ,

թե ինչպես է անդամիդ ծայրը

հանգչում

կոպերիս վրա:

Փոխենք պոեմի ավարտը.

դու ինձ կտաս

քո տան բանալիները:

Իմ մեղրամոմե ձեռքերը

ակնթարթային մի հրաշքով

կաղապարն են

ստեղծում բանալիների:

Մտնում եմ գլխիս քաշած

գուլպայով,

ոչ թե քեզ թալանելու,

այլ սարը խմելու համար,

այն խմելու ամբողջությամբ:

Մինչ կրկնակիորեն կրկնակին

հնչող ձայնը չէ, այլ

տղամարդը, որ նստած էր

Ռեջիո սրճարանում,

Նա, որ հարցնում էր.

I’m turkish and you?

նայում է:

Հազարավոր տարիներ՝

նույն բանը:

Ամեն ինչ պետք է մնա

նույնը:

Առանց հասմիկների Նյու Յորքը

Միևնույն ժամանակ սառեցնում է

բազմադեմ գետը,

նրան տեղում է գամում,

պահպանում հոսանքի ուղղությունը:

Որպեսզի ամեն ինչ նույնը մնա,

սա պետք է լինի վերջին կրակոցը:

Երբ ինձ նորից հարցնես

I’m turkish and you?

որպեսզի ամեն ինչ նույնը մնա

առանց հասմիկների Նյու Յորքը

ասում է, որ

երբ նրանք կրակեն,

հակառակորդը իրավունք չի ունենա

պատասխանելու:

****

Ուստի, փոխանակ քեզ ասելու

I’m armenian[4],

խնդրում եմ մի աման մեղր

Ռեջիո սրճարանում՝

նեղլիկ կղզում,

երկու գետերի արանքում,

այս կանաչապատ ուղղանկյունում,

խիտ քաղաքային կենտրոնում:

Քսում եմ մեղրը անցյալից եկող կենդանու

մեջքին,

[4] □□ □□□ □□:

տալիս եմ, որ լիզի:

Եթե նրա հետ չխոսեմ,

նրա կրակոցը վերջինը կլինի:

Ամեն ինչ կշարունակվի նույն ձևով:

Այն սրվակի պես

որ պահում եմ մինչ օրս դատարկ,

ի հիշատակ իմ ճամփորդության,

քո սերմի

սրվակի մեջ:

Ես այն հոտոտում էի

քեզ կարոտելիս:

Այսպես, սուրբ դամբարանի

սնամեջ քարի նման

ես ջերմացած եմ:

Մոտակայքում՝ Բեթեզդայի շատրվանը,

առանց հասմիկների Նյու Յորքում

անունն է կրում

Երուսաղեմի մի ավազանի

դեպի Բեթ Զեթա հովտի

ճանապարհին,

այնտեղ, ուր լողացնում էին

ոչխարներին

մինչ Սողոմոնի տաճարում

մատաղ անելը:

Գթության մի տուն.

անցյալից եկող այս կենդանու

զոհաբերումն

իմ մեջ:

Դիլըն Թոմասը[5]

և տասնութ վիսկիները,

հիսունականներ,

բարը Չելսիում,

և նրա մահը, ավելի ուշ

հիվանդանոցի մի սենյակում:

***

Նայում եմ շուրջս.

չեմ տեսնում և ոչ մի փողոցի շուն՝

գլուխը հենած

Էգ շան մեջքին,

մինչև վրան բարձրանալու փորձը,

չեմ տեսնում այն ոսկորը,

որ կարծրացնում է՝

չթողնելով նրան դուրս գալ,

մինչ Էգը կաղկանձում է:

Չեմ կարծում, որ կաղկանձը

դառնա Էգ շուն;

[5] □□□□□ □□□□□ (1914 - 1953)- XX □□□□ □□□□□□□□ □□□□□□□□□□□□ □□□□□□□□□□:

Վերածվի հենց ինքն իրեն:

And you?

և որ հենց նա լինի

վերջին կրակողը.

նրան չեմ պատասխանում.

Shun turk:

****

Քանի որ առանց հասմիկների Նյու Յորքում

Չկան փողոցային շներ:

Արդյոք մխիթարություն է

Արդյոք ավելի հեշտ կլիներ

Ասել, որ *Shun* հայերենով

նույնն է թե՝ ասել շուն:

Համարյա:

Քանի որ *Shun turk* ասածը

մի թուրք է,

որ թուրք լինելու պատճառով է շուն:

Եվ քանի որ շուն է,

ես թույլ եմ տալիս, որ սկսի

լիզել ինձ՝

փսլինքները թափելով:

Հետդարձ չկա: Թեև

հենց ժամանակն է սկսելու:

Այս հոսքի մեջ անվերջանալի,

արագացված և անվերջանալի

տղամարդկանց, որ անցնում-դառնում են

ոնց որ կիրճում՝

գույնզգույն աֆիշներով

փողոցներն անցնելով ,

կանգ եմ առնում տարօրինակ իրերով լի

մի փոքրիկ խանութի մոտ,

գնում եմ սպիտակ մի գորգ:

Ոչ թե Իսպահանի կարպետները՝

կարմիր ու մանուշակագույն նախշերով,

արյան հետքերը

թաքցնելու համար,

նրա՝ Արևելքով մեկ տարածվելու ընթացքում:

Սպիտակ մի գորգ՝

Մոսուլի այգիների մեռոնի բույրով:

Այնտեղ՝ Տիգրիս գետից արևելք,

քրդերը գործում են սպիտակ թելով,

որպեսզի ոչ ոք չտեսնի

քո սպիտակ հեղուկի

և ոչ մի սպիտակ կաթիլ

իմ բերնից

կաթելիս:

Դա միայն այստեղ կարող էր պատահել:

Իռլանդական հետքը

Սուրբ Պատրիկ մայր տաճարում

և պանդոկներում:

Ժամանակակից արվեստի թանգարանի

քանդակների այգին,

որտեղ հարգի են

բացօթյա ցուցահանդեսները:

Խնդրում ես, որ քեզ նայեմ:

Նայի՛ր ինձ: Բարձրացնում եմ հայացքս հատակից մինչև բերանդ,

նայում եմ տեսախցիկին:

Աչքերս արտացոլում են նրա շարժումը,

նրա տենդագին շփումը:

Ոսպնյակի հետևից

թուրքը մեզ է նայում:

Միայն այս քաղաքում

կարող էր սա պատահել:

Կարթագենի ոչնչացումը

լքում է պատկերակալը:

Փոլլոքը[6] ժխտում է վրձնի կիրառումը:

Ոչ թե վրձին,

այլ՝ ճիպոտ:

---

[6] □□□□□□ □□□□□□ (1912 –1956) - □□□□□□□□□□ □□□□□□□□□ □□□□□□□, □□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□ □□□ □□□□□□□□□□□□□□□:

Սկիզբ չկա,

Ոչ էլ վերջ:

Թանաքի մի արնահոսություն

հորդում է

արագ շիթերով՝

խազելով

հատակը:

Գույների ու գծերի

մի մրրիկ,

Առաջին պլանում՝

քաղաքային քաոսը:

Ասում ես՝ նայի՛ր ինձ,-

և ես նայում եմ տեսախցիկին:

Ջլերի,

մկանների

մի կատաղած փոթորիկ

Ցայտում է կաթկթալով:

Սև, դեղին և կանաչ գծերի

մի կուտակում

Պատառոտում է մակերևույթը:

Պոլլոքը վերացնում է պատկերակալը.

Գույները այլևս չեն կազմում և ոչ մի

ուրվագիծ.

տարածվում են անդարձորեն,

Բացառում են որևէ

վերակազմում:

Մասնատված մարմիններ,

անանուն, պրիզմայաձև ֆորմաներ:

Էկրանը դառնում է կտավ:

Տեսնու՞մ ես:

Էկրանը, թուղթը, տեսախցիկը,

մի երկրորդ մաշկ:

Տեսնու՞մ ես ամենը:

Պոլլոքը ջնջում է բոլոր վերապահումները

առանց հասմիկների մի Նյու Յորքում:

Մինչ ես՝

նույնիսկ իսլամական քողերով,

նույնիսկ եթե թուրքը

անաղարտություն աղերսի,

խնդրի, որ ինձ ծածկեմ,

ես թույլ եմ տալիս, որ ինձ տեսնեն:

Իմ ոտքերը, քո լեզուն,

այդ այնքան խորքային տեղը,

որ միայն ինքը գիտի

իր խոնավ կրքի մասին:

Քո անդամն ամբողջությամբ հիմա

տաք է,

նրա այրոցն իմ մեջ է:

Այս բառերը

պատկերներ են,

Նավախո հնդկացիների նկարներ

ավազի վրա:

Փրփուրի վրա գծագրվող ամեոբաներից

կամ խեցգետիններից

պատկերներ,

գայլի թեքված գլուխ,

բնակեցնում են տեսանելին,

բռնանում են աչքի վրա,

որ չգտնի

հանգստի մի կետ:

Տատանվող գծերը խճճվում են,

բծավոր կծիկ դառնում:

Շպատելի հետքը

մեզ ի ցույց է դնում

թափվածը:

Այս պատկերը

անվերջ շրջանառվում է

Կարթագենը ոչնչացնողների շրջանում:

*****

Ափերիդ մեջ ես վերցնում

իմ դեմքը:

Ես խժռում եմ

մի թանձրություն, ինժեներական մի հնարք

մինչև այնտեղ, ուր ձգվում է

տիկնիկների պարանը,

մինչև այնտեղ,

նույնիսկ եթե չի երևում,

նույնիսկ եթե գիծը

Պոլլոքի կտավում

մի արագություն է,

մի բան, որ կաթում է ինչ-որ տեղից,

ինչը չի բեկվում.

սերմի

բծերը հատակին:

Այստեղ բոլորս ենք օտարերկրացի:

Աքսորվածը հատում է

օվկիանոսը,

հասնում է մինչև նավահանգստի

ապահով ջրերը:

Հայրենիքը հեռու է մնացել.

այստեղ

անցորդ ենք:

Կողոպտված,

վարժված

անիվին, որ բարձրանում թեքվում իջնում է

և նորից բարձրանում,

Արթուն, գործնական, ուժեղ:

Նավահանգստի թանձր ջրում

դրանք վերածվում են

մեխանիկական

նոր ատամնավոր միացումների:

Նյու Յորքում չկան հասմիկներ

Աշխարհի բոլոր խանութպանները

հաստատվում են այստեղ:

Կալեյդոսկոպի մեջ

մենք մասնատված ենք երևում,

մի կոլլաժ՝

art decó

մեքենաների անիվներով

և ֆրիզերի նման

ռադիատոռներով,

պատուհաններով գմբեթներ՝

քրոմացված պողպատից:

Քանդելուց փրկված

հին գործարաններ,

արվեստի սրահներ՝նախկին

պահեստներում:

Ջահով կնոջ քանդակը

Պետք է դրվեր

Սուեզի ջրանցքի մուտքին:

Բայց նա նույնպես՝

իր հայրենիքից հեռու,

մտավ այս թանձր ջրերը,

ամենակուլ

շրջապտույտի մեջ վտարանդի:

Ժամանակավորապես

ես

մի հյուրանոցում եմ՝

մի նավում.

մի կայարանում

մի գրասենյակում:

Այստեղ

իմ օրապահիկն է:

Այստեղ

մեզ սովորեցնում են

մոռանալ

զինվորների տարածած սարսափը,

վիրավորների ուժասպառությունը:

Եվ արթուն ենք այստեղ,

այստեղ բանտարկյալները

չեն քնում, պետք է

վերապրեն:

I’m turkish and you?

Նրան չեմ ասում

որ մի փոքրիկ երկրից եմ,

որ դարձել է փոքրիկ,

որ ունի հարևաններ՝

հարցաքննելու և վերահսկելու մոլուցքով տարված:

Ինչպե՞ս չլինել խոցելի:

Նրան չեմ ասում՝

ինչպես չլինել խոցելի

սահմանին Իրանի

ու Վրաստանի:

Նրան չեմ ասում,

որ աղբի մեջ փնտրում եմ

կանացի արյունոտ լաթեր,

փնտրում եմ հասկանալու համար՝

արդյոք մի կին կա քեզ հետ ապրող:

I’m turkish and you?

Շտապողներն ինձ հրում են:

Պետք է առաջ գնալ:

Հնարավոր չէ կանգ առնել:

Ցավին վկա լինելու

դիմադրությունը

փոքրանում է այստեղ:

Անվերջանալի մի պողոտայի

աջից

ու ձախից

մի բազմություն է ծափահարում:

Հոկտեմբերի 12-ն է,

և ամեն ինչ մեծ է:

Այս ծավալները՝ Ամերիկան է,-

նրան ասում եմ:

Քեզ հոտոտում եմ էգ շան պես,

որ փնտրում է, հետքն է գտնում

արուների՝գայլի, արջի.

այդ ոսկրային կարծրությունը

սանդալի թանձրուկով

անուշահոտ ջրում:

Սերմը, որ կյանք է տալիս

մի այծի,

հենում է նրա գլուխը ցցին,

և մինչ ականջին շշնջում է,

խժռում է, կուլ տալիս, կտրում:

Ազատության երկրում

մի ստրուկ եմ փնտրում՝

 շնչավոր մի սեփականություն,

ինչպես ստրուկների համայնքն է

Մարսյան դաշտի:

Մի ստրուկ,

որ ջերմացնում է ինձ ներսից,

ինձ կասի՝ մի՛ մոռացեք շնչել:

Մի ստրուկ,

որի դաժանությունը, թեև պատրաստ ինձ ոչնչացնելու,

ձգտում է իրականում

իր սեփական ոչնչացմանը:

Մի ստրուկ, մի օղի, մի թուք՝

այս կղզում, որտեղ ջուրը

սահմաններն է որոշում:

East River –ը՝ արևելքից

և Hudson-ը՝ արևմուտքից,

բարեր՝ նկուղներում,

տափակ կտուրներում:

Ամենագեղեցիկը,

ամենամեծը,

ամենաշատը

լուսանկարվում են զիգզագաձև հրդեհված

աստիճանների,

հետնաբակի փողոցների,

նորաբնակ հոլանդացիների գծած նեղ քարտեզի վրա:

Կերակրում եմ իմ ստրուկին

խավիար, բելուգա, թառափ, սեվրյուգա,

շաքարապատ չրեր,

կապույտ կաշվից մաշած նստարաններին,

պատերին՝ նիկոտինի բծեր:

արյուն եմ փնտրում

ոսկորի փոխարեն,

այնպիսի մի հոսք,

որ կպահի Էրեկցիան՝

դեմքին խփվող ամորձիներով,

ինձ կասի՝ մի՛ մոռացեք շնչել:

Նա՝ խիստ բարձրահասակ այդ ստրուկը,

ձերդ մեծությո՛ւն,

սովորեցնում է ինձ վիզուալ այբուբեններ:

Եվ այդպես սովորում եմ տեսնել

անդունդները Հուդզոնի՝

իր պողպատյա մոխրագույն ջրերով,

երբ սուլում են սիրենները

նավերի

ուժգնացող մի ռիթմով,

որ չի հակադրվում հոսանքին,

ռազմական գործողությունների ռիթմին:

Կարևորը

պատարագն է,

այն վիճակը, որում գտնվում եին

գուշակուհիները,

երբ արտաբերում էին իրենց կանխատեսումները,

մի ձոն,

որ քեզ կհասցնի՝

մաքուր գործողությամբ

քեզ կերպափոխելով,

գործելու եզակիության

այս վերացարկման մեջ:

Դեմքիս հարվածող

իմ ստրուկ աստված:

Դու ենթարկվելով հալչում ես

այս պահի

թելադրանքով,

մեր մեկության գիտակցման

այս կարեկցանքի մեջ:

Այս շարժման մեջ

քաղաքն իր փոքր շուկաներով

շեղում է երևակայությունը

խորաններից

դեպի հին հախճապակյա սափորները,

դարակները՝

ծեփածո զարդարված կտուրներով:

Վեցերորդ ավենյուի

դեղագործը,

որի հաճախորդը

ճար է փնտրում

ճամփորդությունների գիրք գրելու

նպատակով,

որ համընկնի

Հալլեի գիսաստղի հետագծին:

Մարկ Թվենը

սրվակների արանքում

գոռում է՝

Շաղափե՛ք, եղբայրնե՛ր, շաղափե՛ք:

Հարցը

առանց հասմիկների Նյու Յորքում

վերստին հնչում է,

ինչպես կրակին հավելվող փայտը,

ինչպես ծովին՝ ջուրը,

ծովին,

որ չի լցվում,

ինչպես սրագդակների

դատաստանը Լինչի:

I’m turkish.

և ես՝

Սև սև սև եմ:

Պուշկինը սև էր,

Այսպես է ասում Մարինան[7]:

Նյու Հարլեմում,

որտեղ առաջ

միայն հնդկացիներ էին,

---

[7] □□□□□ □□□□ □□□□ □□□ □□□□□□□□□□ □□□□□□ □□□□□□□□□□□ (1892 - 1941):

սևեր են:

Ես էլ մի սև եմ, որ այստեղ եմ

Հիմա,

քանի որ Անատոլիայում

չէի

այն պահին:

Այս տեղը նման է մի նավի,

որ գալիս է քեզ վերցնելու ափից,

նավահանգիստներից

ծովի,

որ չի լցվում,

որ ինձ տեսնես,

մինչ ես խորտակվում եմ:

Պարանը,

որով խեղդամահ եղան

աղջիկները

պլանտացիաներում:

Ես՝ սևս,

ուժասպառ եղած

գանահարումից:

Աշխարհի

բոլոր առավոտները

ես՝

պարտված մի ժողովուրդ,

ներկա եմ լինում

նոր ծնունդին

մի ազգի:

Վուդրո Ուիլսոնը իր դիսլեքսիայով հանդերձ

շարադրում է

ամերիկյան ժողովրդի պատմությունը:

Մեքսիկա ներխուժող

Ուիլսոնի դիսլեքսիան,

կարդալ-գրելու

իր

անկարողությամբ

ինքնավարություն է տալիս

օսմանյան կայսրության ժողովուրդներին:

Դեֆորմացիաներ:

Ես այստեղ եմ,

քանի որ չեմ եղել

այնտեղ

այն պահին:

Մի սև,

որ երբեք չի քնում

իր ամբողջությամբ:

Շերտավոր ապակուց աստիճաններ,

բավարյան փայտ

և վարդագույն մարմար,

եռանկյունի պատուհաններ՝

թեփուկների պես տեղադրված,

և սևը

շեղվում է՝

մոլորյալ հոսանքին տրված,

որ տապալում է նրան։

Սևը տեսնում է Իոսիֆ Բրոդսկուն

«Ռուսական Սամովար»-ում

տնական օղի խմելիս։

Տեսնում է

մի շարժում, որով չի ապրում։

Զարդարված սրահի խորքում

ինչ-որ մեկը պատվիրում է

պիստակով ու անիսով

մերո ձուկ։

Պատկերները դողում են այնպես,

ինչպես որ սևերն են դողում,

չգիտեն ինչպես

դուրս գալ ֆիլմից։

Ոմանք կրակում են

Էկրանի վրա,

որտեղ ներկայացվում է

մի ազգի ծնունդը։

Ամբողջ գիշերը

դիտում եմ սիլուետներ,

սևամորթ կանանց կիսադեմեր,

աֆրիկյան անանուն մի պատմություն՝

Սուրինամի սևամորթների ապստամբության

ճնշումը:

Եվ սեղմում եմ,

քանի որ սևերը գիտեն,

թե ինչպես է

ծովը ճնշում:

Եվ սեղմում եմ՝

ձիթապտուղ հավաքելու պես

ոտքերս շարժելով ճյուղի երկայնքով,

սահեցնելով այն

այնպես, որ ճյուղով մեկ գլորվեն

ու դուրս պրծնեն:

Մի բուսայուղ,

մի շրջանագիծ:

Ցայլքի վրա

մատներ կան,

քաշում եմ

և քեզ սահեցնում

մինչև ծայրը:

Պահել քեզ՝

հիշողության մեջ մի բան պահ տալու պես:

Ինձ մոտ եմ պահում այն,

ինչը

քո անվան նման մի բան է՝

քեզ օրորելով

մարմնի ներքին ջերմության մեջ։

Քաբաբի թշշոցը

փողոցային մանղալներին,

և արաբական

կամ թուրքական

կամ հնդկական երաժշտություն,

 որ խառնվում է

վաճառասեղանի տարբեր կողմերից

եկող կծու հոտերին,

որտեղով կանայք

կարճ հագուստներով

գալիս-գնում են

դեպի քանդակներով բացօթյա

այգին.

այնտեղ

նրանք բոլորը

ջուրն են ընկնում,

քանի որ սև կարճ հագուստով

բոլոր կանայք

առանց հասմիկների այս Նյու Յորքում

ջրահարսներ ու պայիկներ են,

որ երկրային տղամարդ են տենչում.

հղանում են ջրկիր երեխաներ,

որ հետևում են ձկներին:

Շատ տաք ու թանձր շոկոլադի

բաժակը ձեռքներին՝

հեռանում են զբոսայգուց,

կանգ են առնում

մի խանութում՝ լի

անտեսանելի նկարներով

և գերհերոսների համար

մագլցելու կեռիկներով:

Մեկ այլ թաղում

սաքսոֆոնն է հնչում

բարերից մեկում՝

ցածր առաստաղով,

շագանակենու հատակով

և մարոկոյական խճանկարով,

ձեռքով հղկված ալիքաձև ծեփով,

հոնդուրասյան կաոբայի կահույքով:

Կանայք՝ կարճ սև հագուստներով,

քայլում են փողոցների շարժով,

ջրի ռիթմով էլ լողում են:

***

Մազերս

ազատ թափված են ուսերիս:

Երբ թուրքն ինձ հարցնում է.

I’m turkish and you?

մազերիս խառնված

ծխախոտի քուլայի

հոտը

պատասխանում է՝

միայն անցյալը կարելի է ձևափոխվել:

Եվրոպան փախցրեց մի ավար Ասիայից,-

պատասխանում եմ նրան,-

մի ավար հանուն Հեղինեի,

հույների հաղթանակի պատվին:

Կատալոգ նավերի ,

որոնց խորտակումը

տեղի է ունեցել

Դարդանելի նեղուցում:

Իհարկե Թուրքիայում,

այնքան թուրքական է դա՝

այդ խորտակումը:

Հրդեհված քաղաքի տեղը

կբռնի

մեկ ուրիշ

քաղաք.

Դրանից առաջ կամ էլ հետո

հերոսները տուն էին վերադառնում,

հատկապես երևելիները

հավաքում էին ճամբարը,

գիտեին, որ հնարավոր է

սպանել առանց վտանգվելու:

Այսպես է ծնվում Եվրոպան,-

կասեի նրան,

եթե ինքս չխորտակվեի

Նիդեք գետից

ջուր վերցնելուց:

Գիշերն այնքան գաղջ է, որքան ջուրը:

I’m turkish and you?

Տրոյայի ավերակների ավարը

հեռուներն են տարել

մի օվկիանոսով, որ շնչում է:

Եվ դեռ շնչում է:

Արևմուտքի գոռոզությունը,

նրա ռազմավարությունը՝

որոշելու հստակ սահմանը,

թե որքան կարող է դիմանալ

մարմինը տառապանքին:

Մի տղա, որ ամերիկացի չէ,

Այլ սովահար

մի մորից,

մեկուսացնում է իրերը,

պատկերում է անավարտ ֆորմաներ,

կարոտախտը՝ անցյալի ոչնչացման,

երկու սիրեկանների ճամփորդության

ներտ սահմանների,

մի կնոջ, որ հայրենակիցն է թշնամիների,

որ չի վերածվում ամպի,

որ ուրվական չէ

և պատերազմ է հրահրում:

Ձիերի կոնքերի

արյունը

սպիտակ է,

հետք չի թողնում:

Տակավին թափառող,

արևելյան ճոխությամբ զուգված

քեզ սիրում եմ

անհայտ կորածի սիրով:

Աննա □□□□□[8]:

Պետք է թուլացնել դիմադրությունը.

Հիմալայներն իսկ

օվկիանոսի խորքում են եղել.

[8] □□□□□ – □□□□□□:

արմատախիլ անել հիշողությունը:

Սառցադաշտերի նահանջի հետ մեկտեղ

գանգեր որսացող ցեղերը

տեղաշարժվում են դեպի հյուսիս,

հոգ են տանում իրենց կանանց,

գիտեն, որ իրենց կծառայեն

հսկող կոբրաների պես:

Աննա □□□□□:

Երազիս մեջ թուրքին ասում եմ՝

ես հայ եմ,

նա էլ պատասխանում է՝

այս պահից սկսած

ես քեզ կսովորեցնեմ թուրքերեն,

դու էլ ինձ՝ հայերեն:

Երազներ եմ տեսնում,

որ ֆիզիկապես ներկա են:

Գրում եմ

սրելու համար

շոշափելիքի զգացման հստակությունը,

որպեսզի տեսնեմ՝

ինչպես է քսվում թանաքը

ծանրակաթ,

ինչպես է հոսում դարավանդաձև՝

ուրվագծելով ոսկորի ձևեր,

օրգաններ՝ ներքին,

սեռական,

կրակի բոցեր, մարդկային մարմիններ:

Հագեցնել

էջի

անդորրը

մի մշտալար շարժումով,

պատառոտելով

իներտ պատերը՝

ներթափանցել կարծրության մեջ,

հասնել սահունության,

գույնը,

բաբախումը:

Թանաքը

կամ էլ քաղցած մի կնոջ թուքը,

ես՝ Աննա □□□□□□,

ջրի երեսին ծփացող օվալ ցոլքերում գիշերային,

համարյա անշարժ թևի

դաստակով.

Գորկու ձեռքի պես,

որ չէր կարող նկարել

առանց այդ անտանելի ցավի:

Ձեռքը՝ մի դանակ գործածող,

նկարելու համար պաստելներ,

որ լողում են ջրի երեսին

և ոչ մի կերպ չեն սուզվում:

Գորկու ձեռքը՝

կախվելուց

մի օր հետո,

իր նամակը գրելուց

մի օր հետո.

մնա՛ք բարով, իմ սերե՛ր,

փայտյա մի տուփի վրա:

Աննա □□□□□,

I’m turkish and you?

Եվ ես՝ պատասխան տալու անկարող,

երբ քո մատներն են իմ բերանի շուրջ՝

կարծես ձեռք բերած լինեի

քիմքին դիպչող

մի երկրորդ անդամ:

Քո անդամը, իմ լեզուն,

տանգո պարողների պես

իրենց ոտքերը ոլորելով

բերանումս:

Պատը զարդարող մի որմնանկար,

գետնից առաստաղ ձգվող պատուհաններ,

տեսարան՝ դեպի Ռեվինգտոն փողոց,

մենք՝ հենց այստեղ՝ հատակին՝

Վենինիի ջահի տակ,

առանց հասմիկների Նյու Յորքում

գարեջրի ծորակներով բարերում՝

նստած տրակտորից հանած

հին նստարաններին։

Պատառոտվում եմ՝ շենքերին քսվելով,

նշաններ ու

հետքեր եմ թողնում

իմ ոչնչացման։

Ո՞վ է ում նվաստացնում.

Թուրքի մայրը

գլխաշոր է կրում.

Պարանոցը՝ փակ,

դեմքի շուրջն էլ՝

ժանեկազարդ։

Թուրքի մայրն է ինձ հարցնող

ձայնի մեջ.

I’m turkish and you?

Ոչխարներ է պահում ձեռքերին

և երկար մի փեշ է հագել։

Այնտեղ է սպասում

ամբողջ տասնհինգ ամիս,

մինչ իր տղան

Արարատի փեշերին

ծառայում է բանակում:

Գլխապտույտ եմ զգում,

երբ տեսնում եմ նրան

այդ կանաչ համազգեստով

ու սաղավարտով,

հրացանը ուսին:

Իր ձայնի երանգում

հնչում են զրահաբաճկոն

և ճտքակոշիկներ:

Մենք Միջագետքից ենք;

Արմավենու մսոտ պտուղի վրա՝

վարդագույն կամ մանուշակագույն ձիթապտուղ,

շաֆրանի քաղցրավուն բույրի ներքո

կկառուցենք եղբայրության մեր

իրավունքը:

I’m turkish and you?

Եվ իր աչքերում չկան

պատերազմի վետերանների,

սևագուլպա կանացի ոտքերի

փայլեցված սիլուետներ

առանց հասմիկների մի Նյու Յորքում:

Նրա աչքերն ինձ կանչում են, ասում՝

Միջագետքի այծյամ:

***

Եվ ես առաջ եմ գալիս՝

Օնտարիոյի հարավի

երկարուկ տներով

գյուղից ոչ հեռու

վերջին սառցադաշտի

հալոցքից հետո:

Մեծ լճերի շուրջ

իրոկեզները

քարեր են հավաքում,

գետի հունից

մեկ առ մեկ կտրում են

գյուղի հասմիկները

ու նետում դրանք Նիագարայի մեջ:

Նյու Յորքը, այծյամը և ես

համարյա երբեք չենք քնում

և նույնիսկ պառկած

միշտ ուշադիր ենք,

որ մեզ հանկարծակիի չբերեն

հետապնդողները:

Նյու Յորքը, այծյամը և ես.

մենք անտիլոպներ ենք՝

երկար ոտքերով,

ունենք կողային տեսողություն,

որ մեզ օգնում է

փախչել:

Միայն նստակյացների վրա է

ազդում պատերազմը,

թմրեցնում է

որոշ ձայների ու պատկերների

ազդեցությունը:

Զգոն եմ, երբ տեղաշարժվում եմ

բերանիցդ մինչև ոտքերդ,

հետույքս դարձնում եմ քեզ

և կրկին

փնտրում եմ քեզ բերանով,

առանց դադարի՝

զգալով անտառի պտուղներով,

հասուն բամբակի սերմով լի քո հոտը:

Ո՞վ ում է նվաստացնում:

Ցանկության վերջին շրջապտույտում

եթե չի կարող ինձ սպանել,

դառնում է հետապնդող,

այծյամին գրգռելու քո ձևերը

ինձ վախով են լցնում

ու վրաս իշխում,

և ես,

քանի որ մի այծյամ եմ,

որքան ավելի եմ վախենում,

այնքան ավելի ջանադրաբար

և արագ եմ վազում:

Ցերեկը վազում եմ,

նաև՝գիշերը:

Եվ մինչ վազում եմ, խժռում եմ

դաշտերի բոլոր հասմիկները,

և ուրեմն ավելի լավ եմ տեսնում,

քո անդամի շիճուկի նուշահոտն եմ

հետապնդում:

Պատճենել մի մարմին:

Նա, ով իշխում է,

ստեղծում է մի տարածք,

որ մյուսը

չունենա տարածք:

Դու՝բեմադրված,

ներկայացված,

տիրապետված:

Ես՝

աշխարհի մի մաս՝

առանց ինքնության:

Կրկնօրինակում եմ քո մարմինը,

սատարում եմ մի տղամարդու ծնվելուն:

Թևերս են՝ քո թևերի շուրջ,

թևատակերիցդ եմ բռնում:

Դու՝ կռացած,

ոտքերիդ հենված,

վար սահելով:

Մի պահ պոկվում ես ինձանից՝

ցայլքի թրթռումը

հրում է,

և ապա՝ թուլանում:

Միջագետքի այծյամը

օգնում է քո երեխաների ծնվելուն,

որոնք ոչնչացված են իմ բերանում:

Եվ երեխաներդ՝

Բերանումս՝

չեմ կարող պատասխանել

թուրքին,

երբ հարցնում է.

I’m turkish and you?

***

Այծյամների հոտերը

նրան են նայում

այնպիսի հայացքով,

որ աշխարհն է շարժում:

Կենդանիները չեն խոսում,

եթե խոսել իմանային, նրանց կասեի,

որ Միջագետքի այծյամը

այն անունն է,

որով իրենց կոչում են

քուրդ պարտիզանները

Հյուսիսային Իրաքի

լեռներում;

Մի վայր, որտեղ ամեն օր

մեռնում եմ

ու մարդկանց աչքերն եմ բացում:

Քանդիլ սարի

փեշերին

հյուղակաբնակները

ցույց են տալիս իմ լուսանկարը

այրվածքով:

Հիմա, քո պատառոտված երեխաները

բերանումս,

չեմ կարող խոսել, թուրքին պատմել,

որ Արևմուտքը

մեզ խաբեց:

Որ առանց հասմիկների Նյու-Յորքն ու

իր օծանելիքի խանութները

արդեն արել են իրենց առևտուրը:

Օսմանյան տիրապետության

չորս դարերը

Պաղեստինում

փոխհատուցվում է

մի վերաբաշխման

գնով:

Թուրքը և ես

վճարում ենք

Արևելքի

վերաբաշխման գինը:

Անգլիացիներին ու ֆրանսիացիներին

բաժին է ընկնում

Պաղեստինը

իմ մահը ուրանալու

դիմաց:

Սա է գինը՝

մի հայուհի

մի պաղեստինցու

դիմաց:

Այդ ընթացքում

թուրքն իր նարգիլեն է

վառում:

Ծուխը պատում է

նրա անդամը,

նրան բույր է տալիս:

Մոհավկ գետը,

որտեղ կաշիների

առք ու վաճառք կար:

Շրջիկ սահմանադրությունը

մի հանրապետության,

բլուրների վրա մի քաղաքի՝

ավետյաց երկիր

մի նոր մարդու համար:

Գետը՝ մի կաթսա,

որտեղ միախառնվում են

բոլորը, որ մոռացել են,

և ձուլվում են՝

ջնջելով հետքերը:

Այստեղ լինելը հերքում է

նախորդ բնօրրանները:

Այստեղ մի նոր փուռ է,

մի նոր ձուլարան:

Այս նոր մետաղաձուլարանը

խտացնում է նյութերը՝

մետաղն ազատելով

օդից:

Սառեցնել հանածոն

մինչև ճիշտ ջերմաստիճանը:

Ածուխի կայծերը,

Այրում են

նոր փուռի մեջ

այս փախչողին,

նրան, որ հեռվից է գալիս,

դու, ես, թուրքը՝

ամերիկացած,

ազատված և միաձուլված,

որպես խառնածինների մի ցեղ՝

հարմարված։

Թանձրահոս մի հեղուկ

ծնունդ է տալիս

սպիտակությանը.

ես, դու, թուրքը

մեր միջև ջնջում ենք

ինքնության հետքերը՝

միախառնվելով։

Հպում եմ սպիս

ոտքիդ,

սեղմում եմ,

անհետանում է։

Մաշկդ, ինձ մաշկ տալով,

անէացնում է վերքը։

Ուրեմն, այսպես,

ես և դու՝ արյունս կլանված

քո մարմնով,

զբոսնում ենք փողոցներով,

մտնում ենք մի գրախանութ:

Մի գիրք ես բացում,

ինձ ցույց ես տալիս

լուսանկարներ:

Ետևում տեսախցիկը

բաց է, առանց կափարիչի:

Տեսախցիկը հոգի է հանում,

ամենուր տարածում է պատկերը,

թույլ է տալիս,

որ ամեն ինչ շարունակի պատահել:

Լուսանկարը փաստում է

կորուստը

մեզ համառորեն հետապնդող պատկերների:

Այդ մարմինների

ֆիգուրները՝

անընդմեջ պահպանված

և ոչնչացված,

աճում են հայացքի մեջ:

***

Մաննահատտա՝

բնիկ տղամարդու անունն էր՝

նախքան փողոցները,

նախքան գրախանութները,

նախքան Վանդերբիլթների ազնվականությունը:

Մաննահատտա՝

հնդկացիների լեզվով՝

համընդհանուր թունավորման վայր,

մի վայր, ընկուզենիների և սպիտակ սոճիների ,

որոնցից սարքում էին

նավակայմեր:

Հիշելու համար

պետք է մարմին

ունենամ:

Ահա թե ինչու

ծծում եմ, կարծես ուտեմ

մսոտ արմավներ,

որոնց միջուկը

ավելի քաղցր է ներսում, և ավելի քաղցր է

այն, ինչ այլևս չկա,

այս արուի տիրույթը,

որում նա դառնում է էգ,

քո այս տարածքում

հղիացած մի կենդանուց,

որ վերածվում է մարդու,

այդ տեղը՝ ավելի խորը, ավելի քաղցր,

որտեղ պաղում է

անապատի արմավների

մսոտ ոսկորի

գաղջ կաթնաջուրը:

Մի անապատ,

որ ծով ունի

կամ էլ՝ ծովի հիշողություն:

Ես կտեսնեմ

Այն, ինչ չկա,

գաղջ կաթնաջուրը,

որն էգի է վերածվում:

Մի նախամայր՝

կրակ փնտրող,

ծառի մի ճյուղ

և քարով փորված

մի փոս:

Պտտեցնում եմ

ջլապինդ ճյուղը

փայտի անցքի մեջ

ձեռքերով, շատ արագ:

Այսպես, փայտի կտորները

վերածվում են այրվող ածուխների.

փչում եմ:

Կայծեր ստանալու համար

քերծում եմ մի կոշտ քարով,

կվարցային ապարները.

կիսաթանկարժեք քարեր՝

հասպիսի[9] նման,

կոշտ քարն էլ՝ երկաթով հարուստ։

Կայծը

հարվածից

բռնկվում է

դյուրավառ տարրերի հետ,

կրակը,

խածնելով մազերս,

արագ է տարածվում։

Խոշոր եղջերավորների ոսկրե մահակներ

և ես,

որ պահպանում եմ սատկած կենդանուն,

հողով ծածկում եմ

եղջյուրները, որ դուրս չպրծնեն։

Կրակի հիշողությունը

իմ ձեռքերի քարանձավներում

այն էգի, որ փնտրում է

մի բան, որ այլևս չկա։

Ժայռի կայծքարը,

որից կաթում է գաղջ ջուր,

հիշում է իր բախումը

սև հասպիսին,

---

[9] □□□□□□ - яшма.

ինչպես կաղնին,

որ ներսում կրում է իր ողջ անցյալը՝

հորդառատ անձրևից մինչև

այն փոթորիկը,

որ մի անգամ

նրան տապալեց,

որ արձանագրված է

իր խորքում՝

կարմիր թանաքի թորանքով:

Այն պահին,

երբ անհետանում է

այս հարսանեկան վերելքը,

որից կորզում եմ

միլիոնավորները,

որոնք ոչինչ են

հեղուկի մեջ,

որն այն ամենն է,

ինչ ապրել ես այսօր,

որում լուծվում է

քո ողջ անցյալը,

ուխտագնացությունը

արգելափակված մի մաչոյի՝

իր ծագումով

սանձարձակ,

հարբած,

համարյա էգ:

***

Նյու Յորքում հասմիկներ չկան:

Ոտքով անցնում եմ

Բրուքլինի կամուրջը,

որտեղ նախկինում

թաղում էին աղքատներին,

հիմա այնտեղ միմեր են և ծաղրածուներ,

ձախ եմ թեքվում

այն տան մոտից, որտեղ ապրել է

Հենրի Ջեյմսը[10]՝

Մաքդուգալ փողոց,

թիվ 119 -ը.

Ռեջիո սրճարանում,

որտեղ Ջոն Հյուստոնը

նկարահանել է □□□□□□ □□□□□□□□,

մի թուրք ինձ ասում է.

I’m turkish and you?

իսկ ես նրան ասում եմ՝

բանտում երբեք գիշեր չի լինում,

պատասխանում եմ նրան,-

մի ուրվական քաղաք կա

[10] □□□□□ □□□□□ (1843 - 1916) – □□□□□□□□□ □□□□□□ □□□□, □□□□□□□□□ □□□□□□□□□□:

Աղդամ բնակավայրում

Լեռնային Ղարաբաղի

պատերազմից մնացած.

թույլ չտալու համար,

որ քաղաքը կրկին խլեն,

բանակը որոշեց

ոչնչացնել այն,

մի դիակ-քաղաք՝

մզկիթներով ու մինարեներով:

Փախստականները

հիմա ապրում են

ժամանակավոր ճամբարներում,

և նրան չեմ ասում,

որ ես ճապոնուհի մի աղջնակ եմ,

որ պատրաստում է

թաք և սառը թեյի թուրմեր

խմելու համար սկզբից մեկը,

մինչ քեզ համբուրում եմ

իմ տաք լեզվով,

ապա մյուսը՝

շատ սառը,

քեզ դողի հասցնելու սարսուռով,

որ գալիս է

մարմնի պիրկ կենտրոնից.

չեմ ասում նրան,

որ ես ճապոնուհի աղջնակ եմ

մանրանկարներից,

որտեղ կտրած գլուխը

տեղավորում են ոտքերի արանքում,

որ ես այն մյուս ճապոնուհի աղջնակն եմ

մանրանկարից,

որ նայում է, թե ինչպես է ընկերուհին

տեղավորում կտրած գլուխը

ոտքերի արանքում ու ծիծաղում:

****

Ուսերի և կոնքերի միջև

գիծը,

անկյունային մի արագություն

առանցքի շուրջ,

աստղային մի օր:

Ձգված մի կամար՝

մեր գալակտիկայի կենտրոնի

շուրջը պտտվող:

Ընթանում եմ 1600կմ/ժամ արագությամբ

մի կողմի վրա թեքված,

պտտվում եմ հասարակածում

լույսի և տաքության

ավելի մեծ ուժգնությամբ։

Պտտվում եմ,

և իմ պտույտը մեկ օր է տևում՝

օր ու գիշերվա

հերթագայություն առաջացնելով,

և նորից եմ պտտվում,

և պտույտը մեկ տարի է տևում,

կարծես երկիրը լիներ

այն մոլորակը,

որտեղ ապրում եմ՝

տպավորություն ստեղծելով,

թե երկինքն է, որ պտտվում է

իմ շուրջը։

Բարձրացնում ու պահում եմ

ոտքերս օդում.

և մինչ ինձ ես նայում,

չեմ ասում թուրքին,

որ բանտում երբեք գիշեր չի լինում,

քանզի ոչ բոլոր են անշարժ

մեռածների պես:

Լույսի պարզ սպեկտր.

համաստեղությունները

անհետանում են միլիոնավոր տարիներ

Շարունակ,

մասնատվող մանր մարմինների

մի անձրև,

հելիումից ավելի ծանր մետաղների մնացորդներ,

մասնիկներ՝

պտույտի ժամանակ ինձանից պոկոտված.

քո հասարակածը ինձ թույլ է տալիս

լիզելու

իմ իսկ մնացորդները:

Աչքը՝

մի թաղանթ թմբուկի,

որտեղ արձագանքն է լսվում անցորդների:

Տեսողական կադաստրը

առանց հասմիկների Նյու Յորքում՝

իր թաքնատես անցորդներով,

հայտնաբերում են ջուր, գուշակում են

կարողություններ, խորություն:

Մի ճյուղ, մի ճոճանակ,

մի ջղաձիգ շարժում,

ջրափոսը:

Թաքնատեսը բռնում է ճյուղը

մի ծայրից,

Վեներա աստղի անունն է տալիս,

հայտնաբերում է

քարեր, նավթ, կորսված իրեր:

Թաքնատեսի

դաստակների մի փոքր շարժումը

բազմապատկվում է, ցնցվում է,

ժայռերն է ուղղորդում

օվկիանոսային խորքերում:

Քայլաչափ պարսատիկները

Սան Կրիսպինոյի ջուր փնտրելու փայտիկները:

Հրաշքի ծարավը

Աչքերի թմբկահարումի մեջ:

I’m turkish and you?

Եվ ես, ճոճանակը ձեռքիս,

դանակ եմ փնտրում վզի համար՝

ստիպելով, որ հազա, խեղդվի

իր իսկ արյունով,

փնտրելով նրան, որ դեռ

ողջ է մնացել:

Կառչելով այն րոպեներից,

երբ դեռ

կենդանի է

գլխատումից

երկու րոպե հետո:

Երկու րոպե

այն թթվածնի շնորհիվ,

որ դեռ մնում է արյան մեջ,

կլանված հայացքում՝որոտալով

ամպրոպի, հրետանու պես։

Աչքերիս մեջ արտացոլվում է

մարմնի դաջվածքը։

Ես չեմ ասում թուրքին,

որ մարմնիս մազերն եմ վերացրել

արաբական ձևով,

ծամերս՝ հարդարված,

լոգանք ու բուրավետ յուղեր,

արծաթի և սաթի ծանր օղեր,

և սանդալների ժապավենները

կապած են ոտքերիս։

Չեմ ասում թուրքին,

որ որդեգրել եմ քեզ

կրծքով կերակրելու

բերբերական սովորույթով։

Լեզուդ՝ մի տղա՝

նուրբ ստինքներով։

***

Մանհեթըն Բրուկլին,

Բրոնքս Քուինզ,

Սթեյթըն Այլընդ.

Նյու Յորքում հասմիկներ չկան:

Օզգուր, անունս Օզգուր է,-

ինձ ասում է թուրքը:

Երբ իմ անունն է

Հարցնում,

ես պատասխանում եմ՝ “Now”,

նրան ասում եմ՝ «Հիմա» :

Հիմա է իմ անունը:

Օզգուրը պնդում է

Turkish and you?

Ես ասում եմ Հիմա:

Իմ անունը Հիմա է:

Ծնվել եմ հազար տարի առաջ

Բագրատունիների արքայատոհմի օրոք,

ապրում եմ մի երկրում՝

շատ սահմաններով:

Իմ երկիրն ինքը

սահման է:

Ինչպե՞ս կորցրեցինք մեր ազատությունը, Օզգու՛ր:

Հարցնում եմ նրան՝ Օզգո՛ւր,

ինչպե՞ս կորցրեցինք մեր ազատությունը:

Անգլիացիները

Աֆղանստան ստեղծեցին,

որ թույլ չտան

Ռուսական կայսրությանը

հասնել

անգլիական գաղութ Հնդկաստան:

****

Մենք այստեղ ենք,

դու և ես,

և Օզգուրը ինձ չի հասկանում:

Չի հասկանում

որ հիմա,

որ իմ անունը Հիմա է,

որ ես սահմաններն եմ

Հայաստանի,

ոչ հեռու Անի

հինավուրց մայրաքաղաքից:

Բուրվառի մեջ

մի խեժ եմ դնում,

որի այրվելուց

հոտ է տարածվում:

Ամեն տանել բերելու, երկրպագելու

շարժումից

խունկը

ավելի է այրվում,

ամեն ցնցումից

իրար են խփվում

ապարանջանները,

որ կրում եմ

բուրվառի շղթաների զնգոցին

համընթաց:

Հիմա:

Թուրքը չի հասկանում:

Ինձ չի հասկանում

սահմանամերձ գյուղի

տան մեջ ապրող

գյուղացին:

Չի հասկանում,

երբ բղավում եմ՝

«խնդրում եմ»:

Հիմա,

ես,

խնդրում եմ,

ուզում եմ մնալ,

Կարո՞ղ եմ մնալ,

խնդրում եմ:

Գյուղացին

ինձ ցույց է տալիս

Անիի ավերակների լուսանկարներ:

Ինձ ասում է,

ավերակների տակ,

Աննա □□□,

մահացածներ կան,

Աննա □□□,

դիակներ:

Ավերակների տակ:

Ասում է՝ ես-.

գյուղացին ասում է,-

ես պեղել եմ այնտեղ:

Գյուղի տան

սեղանին

խաղող և խնձորներ կան,

որպես ըմպելիք՝ կա թան

սուրճ կա և շոկոլադ:

Սեղանի շուրջ

երեք տղաներ

նայում են ու չեն խոսում:

Միայն նրանցից մեկն է

պատմում, մյուսները

նայում են

իրենց ոսկրոտ կովկասյան

դեմքերով:

Նրանց կանաչ աչքերում ցավ կա,

Ատելություն, ցավ, ատելություն,

և ես, ում անունն է Հիմա,

տեսնում եմ այդ ոսկրոտ տղամարդկանց՝

այնքա~ն ռազմիկ, այնքա~ն անոթի.

վազելով հեռանում եմ բեմից

ու լալիս:

Լալիս եմ անդադար.

վանքից մի քանի մետրի վրա

մատուռն է Անիի:

Այս կողմից

մի քանի երեխաներ՝

ավելի աղքատ,

քան ոսկրոտ տղամարդիկ,

ինձ տանում են մինչև իրենց դպրոցը:

Այստեղ,- ասում են,-

այստեղ մեզ պարել են սովորեցնում,-

ու պարում են:

Պարում են մի քանի մետր այն կողմ պեղումներից,

մեռածներից,

դիակներից:

Շարունակում եմ խոսել, և Օզգուրը

ինձ չի հասկանում:

Չի հասկանում,

որ պարում են,

որ պարի դասից հետո

ինձ ուղեկցում են մեկ այլ դասարան,

որտեղ հրացաններ կան սեղանին,

ազատամարտիկների ֆոտոներ և զինամթերք,

ինքնապաշտպանություն սովորելու համար են,-

ասում են ինձ,-

միայն որովհետև ապրում ենք

շատ սահմաններով

մի երկրում:

Օզգուրը փորձում է

նկարել մի անձեռոցիկի վրա

առանց հասմիկների մի Նյու Յորքում,

և ես չգիտեմ՝ արդյոք քո լեզուն է,

որ զգում եմ

որպես մի կարծր բան,

կարծես մի աշխարհ լինի,

որ ներխուժում է փորոտիքով:

Նայում եմ Օզգուրի աչքերին:

Վերջապես

կարողանում եմ խոսել,

պատմում եմ նրան.

1999-ի հոկտեմբերի 27-ին

հետմիջօրեի 17:15ին

զինված մի խումբ

մտնում է Խորհրդարան

և սպանում է

վարչապետին,

սպանում է Ղարաբաղի

հերոսին,

սպանում է

հայոց հրամանատարին,

սպանում է

□□□□□□□□□□□:

Ես տեսնում եմ եղելությունը

հեռուստացույցով:

Բոլոր լրատվամիջոցները

պատկերում են կորուստը, խենթությունը.

կադրերի տակ

մի գրություն՝

Հայաստան:

Եվ ես,

ում անունը դեռ

Հիմա չէր, մտածում եմ՝

Հայաստանը իրական է:

Եվ հիմա,

երբ անունս Հիմա է,

սպառում եմ քո ապագա երեխաներին,

և դու, քո կարծր լեզվով,

քո անդամով, դու.

մինչ Օզգուրը

չի հասկանում,

չի հասկանում ինձ,

որ երբ

դրդում ես, որ մարմնումս պայթի

□□□□□ □□□□□□□□□□

ընկնելը,

Խորհրդարանի կենտրոնում

ընկնելը

և Անիի ավերակները,

և պեղող գյուղացիները,

և փոքրիկները՝ պարի դասին

և դասարանը՝ հրացաններով,

Օզգուր,

ուրեմն ես,

Օզգուր, ես

հայ եմ: